ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 8-ից 10-ը Լյուքսեմբուրգ (Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն)՝ բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Բնապահպանության նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Լյուքսեմբուրգ (Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն)

   2018թ. հոկտեմբերի 8-ից 10-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ավստրիայի Դաշնային Հանրապետության Կայունության և զբոսաշրջության նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով Արևելյան գործընկերության նախարարական երկրորդ հանդիպում

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Արևելյան գործընկերությունը ԵՄ-ի և Արևելյան հարևանության վեց երկրների միջև համագործակցության շրջանակն է. Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա: Արևելյան գործընկերության երկրների շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության շրջանակներում աջակցության տրամադրումը ռազմավարական նշանակություն ունի ԵՄ-ի համար՝ հատկապես ԵՄ-ի ներսում նպատակներին հասնելու և գործընկեր երկրներում քաղաքացիների կյանքի որակի բարելավման համար:

Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով Արևելյան գործընկերության նախարարական երկրորդ հանդիպումը կայացավ ԵՄ խորհրդում Ավստրիայի նախագահության ներքո, որը հարթակ հանդիսացավ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության ոլորտում հետագա համագործակցության ամրապնդման համար:

Հանդիպման ընթացքում քննարկումներ անցկացվեցին հետևյալ հարցերի շուրջ.

- Քաղաքականության ի՞նչ միջոցներ են անհրաժեշտ թափոնների կառավարման կայուն համակարգի հիերարխիան իրականացնելու համար, այդ թվում, մասնավոր հատվածի ներդրումների առավել արդյունավետ մոբիլիզացման համար՝ աջակցելու շրջանաձև տնտեսություն անցնելուն՝ համաձայն երկրի հատուկ իրավիճակի:

- Որո՞նք են երկրի բնապահպանական ոլորտի և կլիմայի գործողությունների հիմնական առաջնահերթությունները՝ ԵՄ կամ այլ պետական միջոցների ներգրավման համար:

Հանդիպման ընթացքում յուրաքանչյուր երկիր ներկայացրեց կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրները, քննարկվեցին հնարավոր միջոցները առաջացող խնդիրների լուծման և խոչընդոտների հաղթահարման համար, ինչպես նաև երկրի կլիմայի փոփոխության հետ կապված կարիքները և ֆինանսական խնդիրները:

Բարձրաստիճան հատվածի հանդիպումը կենտրոնացած էր այն հանգամանքի վրա, թե ինչպես նպաստել կլիմայի կայուն զարգացմանը տարածաշրջաններում, ուսումնասիրել պլանավորումից մինչև իրականացում ուղիները, ֆինանսական աջակցության հարցերը:

Հանդիպումը առավոտյան նիստին անդրադարձ կատարվեց բնապահպանական խնդիրներին, ինչպես նաև քննարկվեցին Արևելյան գործընկերության տարածաշրջանի բնապահպանական և Կլիմայի քաղաքականության առաջնահերթությունները: Կեսօրվա նիստին քննարկվեցին Կլիմայի փոփոխության հիմնախնդիրները:

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Երկկողմ հանդիպում եմ ունեցել Եվրոպական Հանձնաժողովի շրջակա միջավայրի, ձկնորսության և ծովային հարցերով հանձնակատար պարոն Կարմենու Վելլայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցության շրջանակները, կլիմայի փոփոխության ռիսկերը, առաջնահերթություններն, առկա խնդիրների լուծմանն ուղղված քայլերն, ինչպես նաև ներդրումների վերաբերյալ հարցերը:

8. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

Նախարարական հանդիպման արդյունքը հիմք հանդիսացավ Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով Արևելյան գործընկերության հռչակագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը, 2017թ. նոյեմբերին «Արևելյան գործընկերության» գագաթնաժողովի ժամանակ ընդունված հռչակագրի շրջանակներում համագործակցության առաջնահերթություններին, ինչպես նաև «2020թ. 20 Գործնական Արդյունքներ»-ին:

Հանդիպման ընթացքում անդրադարց կատարվեց Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով Արևելյան գործընկերության հռչակագրի նպատակներին: Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով Արևելյան գործընկերության (ԱլԳ) նախարարական երկրորդ հանդիպման արդյունքում Ավստրիայի նախագահությունն ընդունեց Նախագահական եզրակացությունը:

Հանդիպման արդյունքը համագործակցության հետագա խթանումն է և միասնական ջանքերով 2016թ. դեկլարացիայի իրագործման, շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխության, շրջանաձև տնտեսության և թափոնների

կառավարման ոլորտում արդյունավետ և թիրախային միջոցառումների շարունակությունը:

Հետագայում ԵՄ-ն կաջակցի Արևելյան Գործընկերության երկրներին տնտեսության արդիականացման հարցում՝ կենտրոնանալով շրջակա միջավայրի, շրջանաձև տնտեսության և կլիմայի գործողությունների վրա, որոնք ուղղված են արտանետումների կրճատմանը: Վերջիններս կիրականացվեն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նոր «EU4 Environment» և «EU4 Climate» ծրագրերի միջոցով: «EU4 Environment» ծրագիրը (19,5 մլն եվրո Եվրամիության ֆինանսավորմամբ) նպատակ ունի օգնել Արևելյան գործընկերության երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և բարձրացնել հասարակության կողմից շրջակա միջավայրի պահպանումը: «EU4 Climate» ծրագիրը (8 միլիոն եվրո Եվրամիության ֆինանսավորմամբ) նպատակ ունի աջակցել Փարիզի Կլիմայի Համաձայնագրի իրականացմանը և բարելավել կլիմայի քաղաքականությունը և օրենսդրությունը:

10/16/2018

_X_____

Բնապահպանության նախարար Signed by: Ekeng CJSC

Էրիկ Գրիգորյան